



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2014 թվականի
Թիվ 95-Ա, քաղաք Երևան

«ՍԼԱՎ ԳՐՈՒՊ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐ ՍՏԱՆԻՍԼԱՎ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի մարտի 25-ի դռնբաց նիստում քննարկեց «Սլավ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Սլավ գրուպ» ընկերություն) բաժնետեր Ստանիսլավ Հովակիմյանի գրությունների հիման վրա, մի շարք տնտեսվարող սուբյեկտների անձանց խումբ համարելու վերաբերյալ հարցը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

«Սլավ Գրուպ» ընկերության բաժնետեր Ստանիսլավ Հովակիմյանը 2014 թվականի փետրվարի 11-ի թիվ 05 գրությամբ (այսուհետ՝ Դիմում 1) դիմել է Հանձնաժողով հայտնելով, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի իմաստով ինքը՝ Ստանիսլավ Հովակիմյանը, «Սլավ Գրուպ» ընկերությունը, «Դերժավա-Ս», «Ֆաստֆուդ», «Սլավ Մոթորս», «Սլավ-Ռեֆ Ինտերնեյշնլ», ««Դիլիջան» առողջարան», «Կոնվեկտ» փակ բաժնետիրական, «Ավտոհաուս», ««Սլավ Սթայլ» գեղեցկության սրահ», «Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկա», «Սլավմեդ Բժշկական կենտրոն», «ԷՍԷՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, Սուսաննա Հովակիմյանը, Արկադի Համբարձումյանը, Արմինե Հովակիմյանը, Աշոտ Մանուկյանը, Անդրանիկ Մաշակարյանը, Վրեժ Մաշակարյանը, Էյա Հովակիմյանը կարող են համարվել անձանց խումբ:

Միաժամանակ, 2014 թվականի փետրվարի 12-ի թիվ 06 գրությամբ (այսուհետ՝ Դիմում 2) Ստանիսլավ Հովակիմյանը հայտնել է, որ ցանկանում է «Սլավ Գրուպ» ընկերությունում իրեն պատկանող բաժնետոմսերի 63,9 տոկոսը նվիրատվություն անել իր դուստր՝ Արմինե Հովակիմյանին, որին պատկանում է «Սլավ Գրուպ» ընկերության բաժնետոմսերի 20 տոկոսը և խնդրում է իրեն՝ Ստանիսլավ Հովակիմյանին, Արմինե Հովակիմյանին և «Սլավ Գրուպ» ընկերությանը համարել անձանց խումբ:

Դիմում 1-ի և Դիմում 2-ի (այսուհետ՝ Դիմումներ) հիման վրա Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարչական վարույթ:

Դիմումներով ներկայացված ֆիզիկական անձինք՝ Ստանիսլավ Հովակիմյանը, Սուսաննա Հովակիմյանը, Արկադի Ստանիսլավի Համբարձումյանը, Արմինե Հովակիմյանը, Աշոտ Մանուկյանը, Անդրանիկ Մաշակարյանը («Սլավ Գրուպ» ընկերության գործադիր մարմնի ղեկավարի իրավասություններ իրականացնող անձ), որոնք կարող են հանդիսանալ անձանց խումբ, բաժնետերեր, մասնակիցներ ու տնօրեն են հանդիսանում հետևյալ կազմակերպություններում՝ «Սլավ Գրուպ» ընկերության բաժնետերեր՝ Հովակիմյան Ստանիսլավ (63,9 տոկոս), Հովակիմյան Արմինե (20 տոկոս) և Մաշակարյան Անդրանիկ (տնօրեն՝ 16,1 տոկոս), «Դերժավա-Ս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերեր՝ Հովակիմյան Ստանիսլավ (76,5 տոկոս), Մաշակարյան Անդրանիկ (23,5 տոկոս), «Ֆաստֆուդ»

փակ բաժնետիրական ընկերության բաժնետեր՝ Հովակիմյան Ստանիսլավ (100 տոկոս), «Սլավ Մոթորս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակից՝ Հովակիմյան Ստանիսլավ (100 տոկոս), «Ավտոհաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակից՝ Հովակիմյան Ստանիսլավ (65 տոկոս), «Սլավ-Ռեֆ Ինտերնեյշնլ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետեր՝ Հովակիմյան Ստանիսլավ (100 տոկոս), ««Սլավ Սթայլ» գեղեցկության սրահ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակից՝ Հովակիմյան Ստանիսլավ (100 տոկոս), ««Դիլիջան» առողջարան» փակ բաժնետիրական ընկերության բաժնետեր՝ Հովակիմյան Սուսաննա (100 տոկոս), «Կոնվեկտ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետեր՝ Հովակիմյան Արմինե (100 տոկոս), «Սլավմեդ բժշկական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակից՝ Հովակիմյան Արմինե (100 տոկոս), «Սպիտակի թռչնաբուծական Ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակից՝ Արկադի Համբարձումյան (100 տոկոս), «ԷՍԷՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակից՝ Աշոտ Մանուկյան (100 տոկոս):

Կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ Ստանիսլավ Գուրգենի Հովակիմյանը և Սուսաննա Հովակիմյանը հանդիսանում են ամուսիններ, Ստանիսլավ Գուրգենի Հովակիմյանը, Սուսաննա Հովակիմյանը, Արկադի Ստանիսլավի Համբարձումյանը և Արմինե Ստանիսլավի Հովակիմյանը հանդիսանում են ծնող և երեխա, Արմինե Ստանիսլավի Հովակիմյանը և Աշոտ Մանուկյանը հանդիսանում են ծնող և երեխա: Վրեժ Մաշակարյանը, Անդրանիկ Մաշակարյանը և Էլյա Հովակիմյանը, հանդիսանում են՝ ծնող, երեխա և ամուսիններ:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

- կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպությունում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի կերպով տնօրինելու (այդ թվում՝ առուվաճառքի, լիազորագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարականի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին,

- ֆիզիկական անձը, նրա ամուսինը, ծնողը, երեխան, եղբայրը, քույրը համարվում են անձանց խումբ,

- ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնցից յուրաքանչյուրը սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով անձանց խումբ է կազմում միևնույն անձի հետ, ինչպես նաև այլ անձինք, որոնք սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով տվյալ անձանցից որևէ մեկի հետ անձանց խումբ են կազմում,

- կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձը միանձնյա իրականացնում է այդ կազմակերպության գործադիր մարմնի իրավասությունները,

- իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց խումբը սույն օրենքի իմաստով անձանց խումբ է համարվում Հանձնաժողովի որոշմամբ:

Հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի «Համակենտրոնացման վերաբերյալ պաշտոնական պարզաբանման մասին» թիվ 91-Ն որոշման համաձայն՝ անձանց միացումը Օրենքի իմաստով համակենտրոնացում չի համարվում, եթե այդ վերակազմակերպումը կատարվում է Օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված անձանց խմբում ընդգրկված անձանց միջև:

Ելնելով վերոգրյալից և հիմք Օրենքի 4-րդ հոդվածը, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերը, Հանձնաժողովը՝

ո ր ո շ ու մ է

1. «Սլավ Գրուպ», «Դերժավա-Ս», «Ֆաստֆուդ», «Սլավ Մոթորս», «Սլավ-Ռեֆ Ինտերնեյշնլ», ««Դիլիջան առողջարան», «Կոնվեկտ» փակ բաժնետիրական,

«Ավտոհաուս», ««Սլավ Սթայլ» գեղեցկության սրահ», «Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկա», «Սլավմեդ բժշկական կենտրոն», «ԷՍԷՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին, Ստանիսլավ Հովակիմյանին, Սուսաննա Հովակիմյանին, Արկադի Համբարձումյանին, Արմինե Հովակիմյանին, Աշոտ Մանուկյանին, Անդրանիկ Մաշակարյանին, Վրեժ Մաշակարյանին, Էյա Հովակիմյանին համարել անձանց խումբ՝ հաշվի առնելով, որ վերը նշված տնտեսվարող սուբյեկտների բաժնետերեր ու մասնակիցներ՝ Ստանիսլավ Հովակիմյանը, Սուսաննա Հովակիմյանը, Արկադի Համբարձումյանը, Արմինե Հովակիմյանը և Աշոտ Մանուկյանը հանդիսանում են ամուսիններ, ծնող, եղբայր, քույր և երեխա: Անձանց խումբ համարել նաև Վրեժ Մաշակարյանին, Անդրանիկ Մաշակարյանին (գործադիր մարմնի ղեկավարի իրավասություններ իրականացնող անձ) և Էյա Հովակիմյանին, որոնք հանդիսանում են՝ ծնող, երեխա և ամուսիններ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը հասցեատերերին հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԱԲՈՅԱՆ